

ԳՈՐԾԱԴԻՐ

ԱՌԱՋԻԿԱ ԵՐԵՔ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԲԱՐՁՐԱԼԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱԶԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱԿԱՆԱՅՎԵՆ ԳՐԵԹԵ ՄԵԿ ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻ ԾՐԱԳՐԵՐ

ԲԱՐՁՐԱԼԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ
ՊԱՏՊԱՆԱՎՈՐ ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

Ապրիլի 19-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախագահությամբ անցկացվեց բարձրալեւո բնակավայրերի զարգացման ազգային խորհրդի նիստը, որտեղ վարչապետի նախաձեռնությամբ քննարկվեցին լեռնային բնակավայրերի զարգացման 2021-2023 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումները:



Նիստին հրավիրված էին բաժնաձեռնարկային ընկերությունների և մուլտիգրադատների ղեկավարները, Վրաստանի խորհրդարանի պատգամավորները: Նիստին մասնակցում էր նաև Ախալքալաքիից և Նինոծմինդայից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Սամվել Մանուկյանը:

Գործողությունների ծրագրի համաձայն, երեք տարվա ընթացքում նախատեսվում են 968,5 մլն լարիի ծրագրեր՝ բարձրալեւո բնակավայրերին ինչպես ենթակառուցվածքային, այնպես էլ՝ սոցիալական աջակցություն տրամադրելու համար, ինչը 29 տոկոսով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Նիստում Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների ու շրջակա միջավայրի եւ գյուղատնտեսության նախարարների կողմից ներկայացվեց «Լեռնային շրջանների (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՐՈՒՆԿԱՆ

ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԱՌԱՋԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԵՆՔ, ՈՐԻ ՕՐՈՔ ՊԱՏԵՐԱԶՄ ԶԻ ԵՂԵԼ»



«ՎՐԱՅՎԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ՆԵՇՅ ՇԻՄՆԱՐՄԱՆ 10-ԱՄՅԱԿԸ

2012 թվականի ապրիլի 21-ին անցկացվեց «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության հիմնադիր համագումարը: Հրեյսյանի կուսակցությանը կառավարող կուսակցության քաղաքական խորհուրդը տարածեց հաղորդագրություն, որտեղ նշված է, որ իր գոյության 10 տարիների ընթացքում «Վրացական երազանքը» նշանակալի դեր կատարեց Վրաստանի նորագույն պատմության մեջ:

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության հիմնադրման 10-ամյակի առիթով տարածել է հայտարարություն, որտեղ, խոսելով կուսակցության

10-ամյա գործունեության մասին, նշում է, որ «Վրացական երազանքի» կառավարությունն առաջինն է, որի օրոք պատերազմ չի եղել: - Բիժինա Իվանիշվիլու ղեկավարությամբ վրաց ժողովրդի հետ



հիմնեցին մեր կուսակցությունը, որն արմատախիլ արեց ավտորիտարիզմը, տապալեց բռնապետական պայմանակարգը եւ Վրաստանը (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ԶԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՎԻՐԱՅԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Ձատկական տոնը՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարությունը Վիրահայոց թեմում նշվեց 2022 թվականի ապրիլի 17-ին՝ հավատացյալ բազմության մասնակցությամբ եւ Հայոց եկեղեցու կանոններով:

Թբիլիսիի Սուրբ Գեորգ առաջնորդանիստ եկեղեցում Սուրբ Հարության տոնին մատուցվող Սուրբ պատարագին ներկա էին Վրաստանի կրոնի հարցերով պետական գործակալության նախագահ Զաքա Վաչագանյանը, գործակալության աշխատակիցներ: Տոնական օրը սկսվեց եկեղեցիներում ժամերգության եւ Անդաստանի արարողություններով:

Սուրբ Գեորգ առաջնորդանիստ եկեղեցում Հիսուս Գեորգի հարցերով պետական գործակալության նախագահ Զաքա Վաչագանյանը, գործակալության աշխատակիցներ: Տոնական օրը սկսվեց եկեղեցիներում ժամերգության եւ Անդաստանի արարողություններով:



Տեղի կիրակոս վարդապետ Դավթյանը: (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՄԵԾ ԵՂԵՈՆ - 107

ԳՐԱՏԱՊԱՐՏՎԱԾ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՇԻՄՔՆ Է

1948 թվականին ՄԱԿ-ը դատապարտեց Հայոց Ցեղասպանությունը՝ ընդունելով հետեւյալ բանաձեւը՝ «Հղատապարտված հանցագործությունը հանցագործություն է եւ նոր հանցագործության նախահիմք»: Ու թեւ այս ճանաչումը կայացավ երկրորդ աշխարհամարտից հետո, աշխարհը գիտեր ու գիտի, որ դեռեւս 1915 թվականին հենց հայ ժողովուրդը դարձավ համաշխարհային պատմության մեջ 20-րդ դարի առաջին Ցեղասպանության զոհը: Եվ չնայած, որ արդեն աշխարհի մոտ 40 երկիր ճանաչել ու դատապարտել է Հայոց Ցեղասպանությունը, աշխարհասփյուռ հայությունը շարունակում է բարձրաձայնել պատմական արդարության հաստատման, ցեղասպանությունն իրագործողների իրավահաջորդների կողմից այս ոճրագործության ճանաչման ու ցեղասպանություն վերապրած ազգի փոխհատուցման հարցը:



ՎԱՐԸ ԹԲԻԼԻՍԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎԹՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՂՈՒԹԱՄԲ ԿԿԱՏԱՐՎԻ ԲԱՐԵԽՈՍԱԿԱՆ ԿԱՐԳ

Ապրիլի 24-ին աշխարհի եւ դրանց թվում նաեւ Վիրահայոց թեմի բոլոր եկեղեցիներում հավարտ պատարագի կկատարվի բարեխոսական կարգ՝ ի ռեկոնցիում Հայոց Ցեղասպանության սրբադասված նահատակների:

Թբիլիսիի Սուրբ Գեորգ Առաջնորդանիստ եկեղեցում Վիրահայոց թեմի առաջնորդ Կիրակոս վարդապետ Դավթյանի նախագահությամբ կկատարվի բարեխոսական կարգ՝ հայցելով Մեծ եղեռնի սուրբ նահատակների բարեխոսությունն առ Աստված ի բարօրություն աշխարհի ժողովուրդների առողջության ու երկրների խաղաղության:

ԿՐՈՆԱԿԱՆ

ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ ՎՐԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՆԵՈՒՄ Է ԶԱՏԿԱԿԱՆ ՏՈՆԸ ՃԹՈՆՇԵՄ ԵՐԵՎԱՆ, ՅՈՒՄԵՆԻՅԱ ԵՐԵՎԱՆ

Ապրիլի 24-ին Վրաց Ուղղափառ Առաքելական Սուրբ եկեղեցին նշում է թրիստոնական լուսավոր տոներից մեկը՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությունը՝ Սուրբ Զատիկը:

Հավատացյալները շնորհավորում են միմյանց, ասելով՝ «Քրիստոս աղոթագ» (Քրիստոս հարյալ ի մեռելոց) եւ պատասխանում «Ճեշմարիտադ աղոթագ» (Օրհնյալ է հարությունը Քրիստոսի): Լուսավոր շաբաթվա առաջին երկուշաբթի օրը Մեռելոց է՝ Ննջեցյալների հիշատակման օր: Նշենք նաեւ, որ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ եղեղեցին 18-րդ դարից սկսած կառուցվել է Ննջեցյալների հիշատակման օրը: Նշենք նաեւ, որ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ եղեղեցին 18-րդ դարից սկսած կառուցվել է Ննջեցյալների հիշատակման օրը: Նշենք նաեւ, որ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ եղեղեցին 18-րդ դարից սկսած կառուցվել է Ննջեցյալների հիշատակման օրը: Նշենք նաեւ, որ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ եղեղեցին 18-րդ դարից սկսած կառուցվել է Ննջեցյալների հիշատակման օրը:

1857 թթ.Ամենայն Հայոց կաթողիկոս (Վիրահայոց թեմի առաջնորդ 1814-1828 թթ.) Ներսես Աշտարակեցու (1770-1857թթ) Կոնդակով, Վրաստանի հայերը եկեղեցական տոները նշում էին Հիմն տոմարով՝ վրացիների հետ միասին:

Արդեն 2008 թվականից, Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմը եկեղեցական տոները նշում է Նոր տոմարով, թեւ Վրաստանի հայության մի մասը հետեւում է Հիմն տոմարին, քանի որ՝ վրացական տոմարացույցի համաձայն, տվյալ օրերը հայտարարված են հանգստյան օրեր:

ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԸՆԴՈՐՆԱՎՈՐԱՆՔՆԵՐԸ ՍՈՒՐԲ ԶԱՏԿԻ ՏՈՆԻ ԿՎՊԱԿՈՒԹՅԱՄԲ

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին Սուրբ Զատիկի առիթով շնորհավորեց Հայ Առաքելական Ուղղափառ, Հռոմի կաթողիկոս Ավետարանական Լյուբերական եկեղեցիների հավատացյալներին:

- Քրիստոնյա աշխարհի այս մեծ տոնի՝ Քրիստոսի Հարության տոնի առիթով, շնորհավորում եմ Հռոմի կաթողիկոս եկեղեցու, Հայ Առաքելական Ուղղափառ եկեղեցու եւ Ավետարանական Լյուբերական եկեղեցու հավատացյալներին, բոլոր նրանց, ում համար այս օրը առանձնահատուկ է ու

թանկ,- հայտարարեց Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին: Սուրբ Զատիկի տոնի առիթով շնորհավորական ուղերձ են հղել նաեւ Վրաստանի խորհրդարանի նախագահ Շավա Պապուաշվիլին, Վրաստանի կրոնական հարցերի պետական գործակալությունը:

ՎՐԱՍԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԴԱՏԱԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՏՈՐԱԳՐՎԵՅ ԶԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՎՐԱՍԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Ապրիլի 19-ին, Հայաստանի գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի հրավերով, պաշտոնական այցով Երևանում էր գտնվում Վրաստանի գլխավոր դատախազ Իրակլի Շոթաձեի գլխավորած պատվիրակությունը:

Այցի շրջանակներում, կայացավ Վրաստանի գլխավոր դատախազի հանդիպումը Հայաստանի գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի հետ: Քննարկվեցին երկու երկրներում եւ հատկապես սահմանային անցակետերում քաղաքացիների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացման, սահմանային շրջանների դատախազությունների միջեւ շփումների մեխանիզմների ստեղծման, վրաց-հայկական սահմանին վերահսկողության ու ժեղացման, ապօրինի սահմանահատումների դեմ համատեղ պայքարը կատարելագործելու հետ կապված հարցեր: Հանդիպման արդյունքում, Իրակլի Շոթաձեի ու Արթուր Դավթյանի ստորագրեցին Վրաստանի եւ Հայաստանի դատախազությունների միջեւ համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր: * * *

Նույն օրը Վրաստանի գլխավոր դատախազ Իրակլի Շոթաձեի Հայաստանի գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի ուղեկցությամբ այցելեց Մայր տաճար Սուրբ Էջմիածին, որտեղ հանդիպում ունեցավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ: Ընդհանրապես վրաց ժողովրդին Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության գալիք տոնի առիթով՝ Հայոց Հովվապետը մատթեց, որ երկու ժողովուրդների համագործակցությունը լինի արդյունավետ, նպաստի երկու բարեկամ պետությունների զարգացմանը, առաջընթացին



ու բարձր կյանքի կերտմանը: Ամենայն Հայոց կաթողիկոսը իր եղբայրական ողջույններն ու բարեմաղթանքը փոխանցեց Համայն Վրաստանի Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքին: Իր հերթին, Իրակլի Շոթաձեի Վեհափառ Հայրապետին փոխանցեց Վրաց Ուղղափառ եկեղեցու Հովվապետի ողջույնները:



ՖՐԱՆՍԻԱ ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒՆ Է

Ապրիլի 24-ին Ֆրանսիայում կանցկացվի նախագահական ընտրությունների երկրորդ փուլը: Հիշեցնենք, որ երկու շաբաթ առաջ անցկացված նախագահական ընտրություններում, 12 թեկնածուների թվում գործող նախագահ Էմանուել Մակրոնն ու Ազգային ճակատ կոալիցիայի ղեկավար Մարի Լը Պենը՝ հավաքել են ծայրերի համապատասխանաբար՝ 28,1 եւ 23,3 տոկոսը: Հետեւաբար, ապրիլի 24-ին կկայանա ընտրությունների երկրորդ փուլը:

ԱՄՆ ԱՄԵՐԻԿԱՅԱՆ ԶՈՐՔԵՐ ՈՒՎՐԱԽՆԱ ԶԵՆ ՈՒՂԱՐԿՎԻ

ԱՄՆ-ի նախագահ Ջո Բայդենն ապրիլի 21-ին կրկին հավաստել է, որ ոչ մի ամերիկացի զինվորական չի ուղարկվի Ուկրաինայի տարածք «երրորդ համաշխարհային պատերազմի» ռիսկից խուսափելու համար:

Միացյալ Նահանգների ղեկավարը փաստել է, որ ԱՄՆ-ն իր ջանքերը կկենտրոնացնի Ուկրաինային ռազմական օգնության ցուցաբերման վրա:

Ավելի վաղ, Բայդենը հայտարարել էր, որ Վաշինգտոնն Ուկրաինային կուղարկի 800 միլիոն դոլար գումարի ռազմական օգնության նոր փաթեթ, որը կընդգրկի հրետանի եւ անօդաչու թռչող սարքեր:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՆՈՐ ՊԱՏՄԱՄԻՋՈՑՆԵՐ ՈՌԻՍԱՍԱՆԻ ԴԵՍ

Եվրամիությունը (ԵՄ) շարունակում է խստացնել ճնշումը Ռուսաստանի դեմ եւ ռազմական օգնություն ցուցաբերում Կիևին:

Բրյուսելում աշխատում են պատժամիջոցների հաջորդ փաթեթի վրա, կմեծացվի ճնշումը Ռուսաստանի ռազմական մեքենայի վրա եւ միաժամանակ հնարավորինս աջակցություն կցուցաբերվի Ուկրաինային գեներով եւ սարքավորանքներով:

ՀՐԲԵԼՅԱՆ

«ՎՐԱՃԱԿԱՆ ԵՐԱՉԱՆՔԻ» ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՊՆ Է



«Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության հիմնադրման 10-ամյակի կապակցությամբ քաղաքական միավորման քաղաքական խորհուրդը հանդես եկավ հատուկ հաղորդագրությամբ:

«2012 թվականից մինչ օրս «Վրացական երազանքը» ինձ անգամ արժանացել է հասարակության վստահության մանդատին, ինչի համար համրությանը խորին երախտագիտություն է հայտնում», - ասված է հաղորդագրության մեջ:

գական երազանքը» Բիծինա Իվանիշվիլու գլխավորությամբ, կարողացավ իրականացնել երկրի զարգացման ժողովրդավարական բեկումը», - ասված է հայտարարության մեջ: Նշելով անցած տասը տարիներին կատարած աշխատանքը՝ հաղորդագրության մեջ ասվում է, որ, չնայած ճգնաժամերի, 2012-2022 թվականներին Վրաստանի էկոնոմիկան 27 միլիարդից հասցվեց 60, պետական բյուջեն 8 միլիարդից՝ 19,5 միլիարդի: Արմատախիլ արվեց, այսպես կոչված, վերնախավային կու-

ռուպցիան: Եռապատկվեց ենթակառուցային օբյեկտների շինարարության տեմպը, տասնապատկվեց ջրամատակարարման համակարգերի գործարկումը, հաշվետու ժամանակահատվածում գազի ֆիկացվեց շուրջ 300 հազար հայցորդ: Երկրի 350 հազար քաղաքացի կարողացավ հարթահարել աղբատության շեմը: Հաղորդագրության մեջ նշված է, որ կառավարող թիմի գլխավոր նպաստակը միասնական Վրաստանն է եւ եվրոպական Վրաստանի շինարարությունը:

ԻՐԱԿԻ ԳՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԱՌԱՋԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԵՆՔ, ՈՐԻ ՕՐՈՔ ՊԱՏԵՐԱԶՄ ԶԻ ԵՂԵԼ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տանը կանգնեցրեց ժողովրդավարական զարգացման ուղու վրա: «Վրացական երազանքը» մարդու նկատմամբ հոգատարությունը վերածեց գլխավոր արժեքի եւ այդ ուղուց երբեք չի շեղվել: Մեր

քաղաքական ուժը հիմնված է մարդու, հայրենիքի եւ եկեղեցու նկատմամբ հարգանքի, օրենքի գերակայության եւ պետական շահերի պաշտպանության վրա: «Վրացական երազանքի» կառավարությունն առաջինն է, որի օրոք երկիրը պատերազմ չի եղել: Պրագմատիկ ար-

տաքին քաղաքականության միջոցով, չնայած անվտանգության լուրջ մարտահրավերների, «Վրացական երազանքը» ամրապնդել է խաղաղությունը եւ որակապես բարձրացրել երկրի կայունությունն ու անվտանգությունը», - ասված է վարչապետի հայտարարության մեջ:

ՎՐԱՍԱՆԸ ՈՒՎՐԱԽՆԱՅԻ ԿՈՂՔԻՆ Է

ՎՐԱՍԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՎՐԱԽՆԱՅՈՒՄ

Ապրիլի 16-17-ը Վրաստանի խորհրդարանի պատվիրակությունը՝ խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլու գլխավորությամբ, գտնվում էր Ուկրաինայում:

Կիևում վրացի պատգամավորներին ընդունել է Ուկրաինայի Ռադայի նախագահ Ռուսլան Ստեֆանչուկը: Վրացական պատվիրակության անդամները Ռադայի նախագահի հետ այցելել են Բուչա ու Իրպեն: Պատվիրակության կազմում էին Վրաստանի խորհրդարանի փոխխոսնակներ Դավիթ Սերգենցկոն, Արչիլ Թալակվաձեի եւ Լեւան Իոսելիանին, Սփյուռքի եւ Կովկասի հարցերի խորհրդարանական հանձնա-

ժողովի նախագահ Բեքա Օդիշարիան, «Լեյոյի» անդամ Անա Նազվիշվիլին, «Գիրչիի» անդամ Վախթանգ Մեգրելիշվիլին, համրապետական Խաթունա Սամնիձեի եւ «Հանուն Վրաստանի» կուսակցության անդամ Գիորգի Խոջեւանիշվիլին: Նշենք, որ «Ազգային շարժման» խորհրդարանական խմբակցության անդամները հրաժարվեցին միանալ Վրաստանի խորհրդարանական պատվիրակությանը եւ Ուկրաինա մեկնեցին առանձին:



ՈՌԻՍ - ՈՒՎՐԱԽՆԱԿԱՆ ՈՒՋՄԱԿԱՆ ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ 58-ՐԴ ՕՐԸ

Արդեն 58 օր է, ինչ Ուկրաինայում շարունակվում է ռուսական ագրեսիան: Շարունակվում է Մարիուպոլի, Խարկովի, Դոնեցկի, ուկրաինական մյուս քաղաքների հրետակոծությունն ու ռմբակոծությունը: Երկու կողմերի զոհերի թիվն արդեն հաշվվում է տասնյակ հազարներով: Ռուսական կողմի հայտարարությամբ, Մարիուպոլը լրիվությամբ գրավված է, դիմադրության միակ օջախը «Ազոլստալ» գործարանային համալիրն է, որտեղ ամրացել է ուկրաինական «Ազոլ» գումարտակը: Ուկրաինական կողմի հավաստմամբ, Մարիուպոլի, ինչպես նաեւ ուկրաինական մյուս քաղաքների եւ բնակավայրերի համար պայքարը շարունակվում է եւ կշարունակվի մինչեւ հաղթական ավարտը:

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուի հետ հանդիպմանը հրամայեց չգրոհել Մարիուպոլի «Ազոլստալ» գործարանային համալիրի վրա՝ այն համարելով ոչ նպատակահարմար:

ՄԵՎ ԾՈՎՈՒՄ ԽՈՐՏԱԿՎԵՑ «ՈՌԻՍԱԿԱՆ ՆԱՎԱՏՈՐՄԻ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ»

Մեւ ծովում ռուսական նավատորմի առաջատար «Մոսկվա» հածանավը խորտակվեց՝ ուկրաինական «Նեպտուն» հրթիռների հարվածից: Ռուսական կողմը հայտարարեց միայն «Նավում բռնկված հրդեհի» մասին, որը հանգեցրեց ռազմանավում գտնվող զինամթերքի պայթյունի եւ «փոթ-

րկի պայմաններում ռազմանավի խորտակմանը»:

ՈՒՎՐԱԽՆԱՅՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂԸ ՑԵՂԱՄՊԱՆՈՅՈՒՆ Է

ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը Ուկրաինայում Ռուսաստանի կողմից խաղաղ բնակչության դեմ գործողություններն անվանեց ցեղասպանություն: Սպիտակ տան ղեկավարը հայտարարեց, որ ամերիկացիների բյուջեն չպետք է կախված լինի Գրանից, թե «այլ երկրում դիկտատորը ցեղասպանություն է իրականացնում»: ԱՄՆ նախկին նախագահ Դոնալդ Թրամփը պաշտպանեց Սպիտակ տան գործող նախագահի՝ Ուկրաինայում տեղի ունեցող իրադարձությունները՝ որպես ցեղասպանություն որակավորելու մասին հայտարարությունը:

Շարքից շարք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՅԸ ԿԱՐՈՂ Է ԹԱՆԿԱՆԱԼ 20 ԹԵՐՐԻՈՎ

Ինչպես հայտարարեց «Հաց արտադրողների միության» նախագահ Մալխազ Դոլիծեն՝ հացի գինը անպայման կվերաճի: Եթե Ռուսաստանից ներկրվի թանկացած ալյուր, այդ դեպքում հացը կարող է թանկանալ 20 թերթիով:

Մալխազ Դոլիծեն հաստատեց նաեւ, որ փոշի հացն արդեն թանկացել է 10 թերթիով:

Վրացական հաց արտադրողներն աշխատում են բոլորովին այլ տարածքում, ֆիքսված վճար են վճարում: Նրանք ալյուրը ստանում են մատակարարներից, որոնք այն գնում են ջրաղացից, եւ ապա վերավաճառում այդ ալյուրը: Յետեւաբար, նրանք գտնվում են բոլորովին այլ դաշտում, եւ դրանց գնազոյացումը միանշանակ ավելին է:

Հացի գինը մի քանի գործոններից է բաղկացած: Հիմնական գործոնը ալյուրի ինքնարժեքն է: Ալյուրը հիմնական զանգվածն է, չոր նյութ, որից հաց են թխում: Վրաստանն արտադրում է իր քանակի միայն 10-15 տոկոսը, մնացածը ներկրվում է: Բացի այդ, կա խմորիչ, աղ, այս ամենը ներկրված է, ուստի գները սահմանվում են: Մարտի 20-ին, երբ առատ ձյունը տեղաց, Լարսի անցակետը փակվեց, եւ մոտ տասը օր 30 կիլոմետրանոց մեքենաների շարք էր

կանգնած: Հաց արտադրողները նույնպես հիմնականում օգտվում էին տեղական ջրաղացներից, թեւ հիմնականում կախված էին Ռուսաստանից ներկրվող ալյուրից: Այս ալյուրի արժեքը կազմում էր մինչեւ 65-70 լարի: Մարտի վերջին, երբ մաքսատունը բացվեց, եւ ալյուր ներկրվեց, առաջին ներկրված ալյուրի արժեքը սահմանվեց 75 լարի, այսինքն՝ ալյուրի գինը բարձրացավ: Տեղական ալյուրը, որը պատրաստվում է մեր գործարաններում, արժե 80 լարի: Եթե սրան գումարենք էլեկտրաէներգիայի, բնական գազի, ջրի, աշխատավարձի, բաշխման անհրաժեշտ հարկերը, ապա կենտրոնանում ենք գների վրա: Մենք տեսանք, որ գնազոյացման վերանայման անհրաժեշտությունը կար օրակարգում: Չեմ կարող հստակ ասել, թե ինչպես կփոխվի, բայց գնի վերանայումն անպայման տեղի կունենա: Մեր հաշվարկներով, այն կհասնի մոտ 20 թերթիի է հասնում, ասաց Մալխազ Դոլիծեն:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՎԻՐԱՅԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հընթաց Սուրբ պատարագի, Պատարագիչ Հայր Սուրբը ընթերցեց Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի գատկական պատգամը:

Նա շնորհավորանքի խոսքեր ուղղեց նաեւ վրաց քրիստոնյա ժողովրդին, ով այդ օրը նշում էր Ծաղկազարդի տոնը: Եկեղեցու բակում տեղի ունեցավ տոնական հյուրասիրություն:

Հիտուս Քրիստոսի Հարության տոնին նվիրված Սուրբ պատարագներ մատուցվեցին Վիրահայոց թեմի՝ Բաթումիի, Ռուսթավիի, Սամցխե-Ջավախեթիի, Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում գործող հայոց եկեղեցիներում եւ հոգեւ-

որ կենտրոններում: Ամենուրեք հայ կաթողիկոսներին գատկական տոնի կապակցությամբ շնորհավորելու էին եկել պաշտոնյաներ, տարբեր ազգի հավատացյալներ:

Իսկ մինչ այդ, ապրիլի 16-ի երեկոյան, Վիրահայոց թեմի գործող եկեղեցիներում վառվեցին տաճարի ջահերն ու կանթեղները, բացվեցին խորանի վարագույրները եւ մատուցվեց Գրագալույցի Սուրբ պատարագ:

Թբիլիսիի Հավլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցում, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի հանդիսատեսությամբ, Գրագալույցի Սուրբ պատարագ մատուցեց նորած ըսահանա Տեր Հովսեփ

Հարությունյանը:

Սուրբ պատարագի ավարտին հավատացյալներն իջեցված աշտանակի մոմից վառեցին իրենց մոմերը եւ Փրկչի օրհնությունն ստացած վերադարձան տուն: Իրենց հետ տանելով Տիրոջ Հարության Սուրբ Լույսը:

Սուրբ Հարության տոնից հետո կատարվեց առաջին Տնօրինչի արարողությունը: Թեմի առաջնորդի գլխավորությամբ եւ հոգեւոր հայրերի մասնակցությամբ օրհնվեցին հացը, ջուրը եւ աղը:

Սուրբ Հարության ավետիսով ավարտվեց 48 օր առաջ սկսված Մեծ պահքը, որը լուծվում է ձկնեղենով, ձվով եւ յուղով:



ԱՐՐԲԵՑԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Ապրիլի 19-ին պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Արբեքցանի Միլի Սեչիկի նախագահ Սահիրա Գափարովան:

Այցի շրջանակներում, Սահիրա Գափարովան հանդիպումներ ունեցավ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու, նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլու, խորհրդարանի նախագահ Շավվա Պապուաշվիլու, փոխնախագահ, Արբեքցանի խորհրդարանի հետ բարեկամության խմբի ղեկավար Արչիլ Թալալվաձեի հետ: Հանդիպումներում կողմերը քննարկեցին բազմակողմ համագործակցության հեռանկարները:

ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ՕՐԵՆՔՆԻ ՎԱՐՈՎԱՍԿԵՏ ԱՋԱՏ ԱՐՉԱԿԵՑ 250 ԲԱՆՏԱՐԿՅԱԼ

Ապրիլի 12-ին, Վրաստանի խորհրդարանի կողմից ընդունված «Համաձայնագրի մասին» օրենքի արդյունքում, շուրջ 250 բանտարկյալ վաղաժամկետ ազատ է արձակվել եւ թողել բանտը:

Նշենք, որ համաձայնագրի մասին օրենքի համաձայն, նոր կորոնավիրուսի (COVID-19) համաճարակի դեմ պայքարի գործընթացում կալանավորված անձանց նկատմամբ պետության կողմից սահմանված սահմանափակումները փոխհատուցելու նպատակով, Քրեական օրենսգրքով նախատեսված հանցանքների համար դատապարտյալների պատժի ժամկետը կրճատվում է:

ՏԱՐԱԾԱՆԵՐԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՆԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ



Ապրիլի 20-ին Ախալքալաքիում կայացավ «Երիտասարդական ձեռներեցությունը գյուղի զարգացման համար» ծրագրի վերաբերյալ տեղեկատվական հանդիպում, որին ներկա էին ինչպես պետական, այնպես էլ՝ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ, երիտասարդներ, անհատ ձեռներեցներ:

Հանդիպմանը իրականացվելիք աշխատանքների մասնամաներով համոզեց եկավ ծրագրի տնօրեն Ուչա Վարանշվիլին:

Նշենք, որ «Երիտասարդական ձեռներեցությունը գյուղի զարգացման համար» (RDYE) երեքուկես տարի տեւող ծրագիր է, որն իրականացնում է Վրաստանում Mercy Corps-ը: Ծրագրի նպատակը 18-35 տարեկան երիտասարդների ձեռներեցության հմտությունների ու գիտելիքների զարգացումն է, գյուղատնտեսական եւ ոչ գյուղատնտեսական ուղղությունների աջակցությունը, ֆինանսական հասանելիությունը եւ շուկայական հարաբերությունների ձեւավորման խրախուսումը: Երիտասարդները ստացած գիտելիքներն ու հմտությունները կօգտագործեն ինքնազբաղվածության եւ աշխատանք գտնելու գործում:

Ծրագիրը կիրականացվի 42 ամիսների ընթացքում (2021 թվականի դեկտեմբեր - 2025 թվականի մայիս) Վրաստանի չորս շրջաններում, 18 համայնքում: Աշխարհագրական շրջանակը հետեւյալն է՝ Քվեմո Քարթլի, Ռուսթավի, Մառնեուլի, Բուխիսի, Գարդաբանի, Թեթրիժարո, Ծալկա: Սամցխե-Ջավախեթիում՝ Բորժոմի, Ասպինձա, Աղիզենի, Ախալցխե, Ախալքալաքի, Նինոծմինդա: Շի-

ղա Քարթլում՝ Գորի, Քարելի, Կասպիում՝ Սցխեթա-Սթիանեթի, Սցխեթա, Թուշեթի, Թիանեթի:

Ծրագիրը կաջակցի առնվազն 1 500 երիտասարդների (50 տոկոսը՝ կին), նրանք թվում խոցելի եւ մարզինալացված խմբերին (ազգային, կրոնական փոքրամասնություններ, բարձրալեռ գյուղերում բնակվող, տեղահանված եւ սահմանափակ հնարավորություններ ունեցող մարդիկ):

Ծրագիրը իականացվում է հինգ փուլով: Հիմնական ուսուցումը կսկսվի 2022 թվականի մայիսին:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԱՆԱԼՑԻՒՄԵՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ



Ապրիլի 20-ին Ախալցխեի մունիցիպալիտետի քաղաքապետ Իրակլի Լազարաշվիլին եւ նախադպրոցական դաստիարակության հաստատությունների ղեկավար Մարիա Մերաբիշվիլին հանդիպում ունեցան կրթության եւ գիտության նախարարության նախադպրոցական կրթության վարչության համակարգող Թեա Չոնեմիձեի եւ նախադպրոցական կրթության վարչության ավագ փորձագետ Մարիան Զիբուխաշվիլու հետ:

Հանդիպման շրջանակներում, քննարկվեցին մունիցիպալիտետի մանկապարտեզներում առկա իրավի-

ճակի, նախադպրոցական դաստիարակության աջակցության տեսանկյունից իրականացվող նախագծերն ու առաջիկա ծրագրերը:

Նշենք, որ Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ, Ախալցխեի մունիցիպալիտետում է «Նախնական եւ նախադպրոցական դաստիարակության ու կրթության, օրենքի եւ պետական չափորոշիչների ներդրման աջակցությունը մունիցիպալիտետների մակարդակով» նախագիծը:

ՆԱԽԱԶԵՌՆՈՂՆԵՐԸ ԺՂԱՆՈՎԱԿԱՆ ԳՅՈՒՂԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՆ ԵՆ

Ապրիլի 16-ին Նինոծմինդայի մունիցիպալիտետի ժողովական գյուղում անցկացվեց սեղանի թենիսի վարկանիշային մունիցիպալ մրցաշար, որին մասնակցեցին մունիցիպալիտետի վեց հանրակրթական դպրոցների շուրջ 100 աշակերտներ:

Մրցաշարը նախածեռնել էին ժողովական գյուղի երիտասարդները, կազմակերպել էր քաղաքապետարանի մշակույթի, կրթության ծառայության, սպորտի եւ երիտասարդության բաժինը:

Մրցաշարի պատվավոր գավաթը նվաճեց Օրոջալարի հանրակրթական դպրոցի թիմը, երկրորդ տեղը զբաղեցրեց Սպասուկա գյուղի թիվ 1, իսկ երրորդ տեղը՝ ժողովի հանրակրթական դպրոցի թիմերը: Մրցաշարի հաղթող թիմերը կմասնակցեն Վրաստանի միջազգային առաջնություններին:

Հաղթողները պարգևատրվեցին քաղաքապետարանի կողմից տրամադրված գավաթներով, մեդալներով, պատվոգրերով:

Մասնակիցներին տրվեցին նաեւ անհատական նվերներ՝ ժողովական գյուղի երիտասարդների եւ խաղերի կազմակերպիչների կողմից:

Նվերները հանձնեցին քաղաքապետարանի մշակույթի ծառայության աշխատակիցները՝ ծառայության պետ Լեւոն Վարդանյանը, ծառայության սպորտի եւ երիտասարդության բաժնի պետ Գրիգոր Թոփուլյանը, ժողովի վարչական միավորի քաղաքապետի ներկայացուցիչ մասնագետ Հովսեփ Անտանյանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆ. «ԶԱՎԱԽՅՈՒՆԵՐԻ ՇԻՄԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՆՉՊԵՍ ՄԵՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ, ԱՅՆՊԵՍ ԷԼ՝ ԵԱՂԿ-Ի ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԵՆ»

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ՝ ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻՑ ԵՎ ՆԻՆՈՇՄԻՆԴԱՅԻՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ՊԱՏՊԱՆԱՎՈՐ ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԵՏ

Ապրիլի 13-15-ը պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում ԵԱԳԿ-ի ազգային փոքրամասնությունների հարցերով զերագույն հանձնակատար Կայրաթ Աբդրախմանովը: Այցի շրջանակներում, ԵԱԳԿ պաշտոնատար անձը հանդիպումներ ունեցավ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու, Վրաստանի հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Թեա Ախվեղիանու հետ:

Հանդիպումներին կողմերը քննարկեցին ԵԱԳԿ-ի կառույցների հետ Վրաստանի հաջող համագործակցությունը: Հատկապես նշվեց ՀՀՀՄ-ի գրասենյակի հետ համագործակցության ակտիվ դինամիկան: Վարչապետի խոսքով, Վրաստանը բազմազգ երկիր է, որտեղ առանձնահատուկ նշանակություն ունի քաղաքացիական հավասարության և ինտեգրման քաղաքականության արդյունավետ իրականացումը: Նրա պնդմամբ, քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարությունը, որը ստեղծվել է ՀՀՀՄ-ի գրասենյակի ակտիվ ներգրավվածությամբ և համապատասխան գործողությունների պլանով, ուղղված է բոլոր քաղաքացիների հավասար հնարավորությունների ստեղծմանը՝ անկախ էթնիկ, կրոնական կամ այլ խմբերի ներկայացվածությունից:

Հանդիպումներին նշվեց, որ կրթական ոլորտը, որն ապահովում է որակյալ կրթություն մայրենի լեզվով, Վրաստանի և ՀՀՀՄ-ի գրասենյակի միջև հաջող համագործակցության վառ օրինակ է, մշակութային միջոցառումների խթանում:

Այցի շրջանակներում, ԵԱԳԿ-ի ազգային փոքրամասնությունների հարցերով զերագույն հանձնակատար Կայրաթ Աբդրախմանովը հանդիպում ունեցավ նաև Վրաստանի խորհրդարանի ազգային փոքրամասնության ներկայացուցիչ պատգամավորների, մասնավորապես՝ Վրաստանի խորհրդարանի Ախալքալաքից Ե. Նինոժմիդիայից մեծամասնական պատգամավոր Սամվել Մանուկյանի և համամասնական պատգամավոր Ամբաստ Կյուրեղյանի հետ:

Հանդիպման ավարտին մենք կապվեցինք Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Սամվել Մանուկյանի հետ և խնդրեցինք մանրամասնել ԵԱԳԿ-ի ազգային փոքրամասնությունների հարցերով զերագույն հանձնակատար Կայրաթ Աբդրախմանովի հետ հանդիպումները: - Բնականաբար, հանդիպմանը խոսեցինք ազգային փոքրամասնությունների՝ երկրի հասարակական քաղաքական կյանքում ինտեգրման մասին: ԵԱԳԿ ներկայացուցիչն առանձնակի հետաքրքրություն դրսևելորեն Սամվել-Չավախբեիի տարածաշրջանում հոծաբնակ հայ ազգաբնակչության մեջ այդ ուղղությանը իրականացվող միջոցառումների նկատմամբ: Մենք մանրամասն խոսեցինք ինտեգրման ռազմավա-

րության շրջանակներում իրականացվող և առաջիկա տարիներին իրականացվելիք ծրագրերի մասին: Խոսեցինք նաև մեր տարածաշրջանում պետական լեզվի իմացու-

նություններով հոծաբնակ մունիցիպալիտետների վարչական, հանրային ու մասնավոր հատվածներում: Նշեցինք «4+1» ծրագրով ազգային փոքրամասնությունների երիտասարդների համար դյուրացված կարգով վրացական բուհերում ուսումը շարունակելու հնարավորության մասին: Խոսեցինք չափազանց բնակիչների պետական լեզվի ուսուցման նոր ծրագրերի մասին:

Իր հերթին, զերագույն հանձնակատարն ընդգծեց Վրաստանում քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման ոլորտում արձանագրված առաջընթացը՝ նշելով, որ այդ փորձը կարող է լավագույն օրինակ ու մոդել ծառայել այլ երկրների համար և պատրաստակամություն հայտնեց ակտիվ աջակցել այդ քաղաքականությանը:

Ընդհանուր առմամբ, ԵԱԳԿ-ի ազգային փոքրամասնությունների հարցերով զերագույն հանձնակատար Կայրաթ Աբդրախմանովի հետ հանդիպումը հստակ ցույց տվեց, որ Վրաստանի իշխանությունների կողմից երկրի կյանքում ազգային փոքրամասնությունների ինտեգրման որդեգրած ռազմավարությունը դրական արդյունքների է հանգեցնում, և այն արժանիորեն է գնահատվում միջազգային հանրության կողմից:



թյան մակարդակի և որակյալ կրթության հասանելիության բարելավման ուղղությամբ իրականացվող կոնկրետ քայլերի մասին: ԵԱԳԿ ներկայացուցիչն առանձնակի հետաքրքրվեց ազգային փոքրամասնությունների, ազգությանը հայ երիտասարդների և կանանց հասարակական-քաղաքական կյանքում մասնակցության մեծացման, նրանց ակտիվ ներգրավման հարցով:

Մենք ԵԱԳԿ ներկայացուցիչն պատմեցինք ազգային փոքրամասնության երիտասարդների համար գործող Չուրաթ Ժվանիայի վարչարարական դպրոցի մասին, նշեցինք, որ այդ կրթօջախի գրեթե տասնյակ, եթե ոչ հարյուրավոր շրջանավատներ արդեն արդյունավետ աշխատում են ազգային փոքրամաս-

ԳՈՐԾԱԳԻՐ

ԱՌԱՅԻԿԱ ԵՐԵՔ ՏԱՐԿԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԲԱՐՉՐԱԼԵՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՉԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱԿԱՆԱՅՎԵՆ ԳՐԵԹԵ ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ ԾՐԱԳՐԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

զարգացման մասին» Վրաստանի օրենքով սահմանված սոցիալական նպաստների օգտագործման 2021 թվականին բարձրալեռ բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ծրագրերի կատարման հաշվետվությունը: Նշվեց, որ բարձրալեռ բնակավայրերում գյուղատնտեսության զարգացման ծրագրերի համար հիմնադրամից ծախսվել է մինչև 3 մլն լարի, որը ֆինանսավորել է վերամշակող ձեռնարկությունների, գյուղատնտեսական կոոպերատիվների հիմնումը, ինչպես նաև նոր այգիների մշակումը:

լարին ծախսվել է օրենքով նպաստներով վրա, որոնք ներառում են հավելավճարներ, կենսաթոշակներ, սոցիալական նպաստներ, բժշկների, բուժքույրերի, ուսուցիչների, տարբեր մարզածելների մարզիչների և շատ այլ ոլորտների աշխատավարձեր, ինչպես նաև սպառված էներգիայի 50 տոկոսի համաֆինանսավորում: Նշվեց, որ 2021 թվականին սոցիալական նպաստների վրա ծախսվել է շուրջ 96,5 մլն լարի, ինչը 19 տոկոսով ավելի է 2020 թվականի ցուցանիշից:

Բարձրալեռ բնակավայրերի կարգավիճակ է շնորհվել 1801 բնակավայրի, որը կազմում է Վրաստանի ընդհանուր բնակավայրերի մոտ 49 տոկոսը: Ապրիլի տվյալներով, բարձրալեռ բնակավայրում բնակվելու կարգավիճակից օգտվում է մոտ 262 հազար մարդ, 497 ձեռնարկություն, մոտ 1,16 միլիարդ լարի է հատկացվել բարձրալեռ բնակավայրերին աջակցելու համար վերջին 6 տարում: Դրանից մոտավորապես 402,7 միլիոն

Նիտում քննարկվեց «Լեռնային բնակավայրերի զարգացման հիմնադրամի» համար նախատեսված հատկացումներից միջոցներ հատկացնելու մասին որոշման նախագիծը, ըստ որի, 2022 թվականի ծրագրի համաձայն, 2022 թվականին համապատասխան ենթակառուցվածքային և գյուղատնտեսական ծրագրերի համար կհատկացվի 20 մլն լարի, իսկ բարձրալեռ բնակավայրերում գյուղատնտեսական ծրագրերի իրականացմանը կհատկացվի մոտ 5 մլն լարի, ինչպիսին է ագրոպայիտավարության նախագիծը:

ՕԹԱՐ ՇԱՄՈՒԳԻԱ. «ՄԻԱՅՆ ԱՅՍ ՏԱՐԻ ԲԱՐՉՐԱԼԵՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԾԱԽՍՎԻ 5 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ»

Բարձրալեռ բնակավայրերի զարգացման ազգային խորհրդի նիստի ավարտին Վրաստանի շրջակա միջավայրի և գյուղատնտեսության նախարար Օթար Շամուգիան հայտարարեց, որ շուրջ 5 մլն լարի կհատկացվի 2022 թվականին բարձրալեռ բնակավայրերում գյուղատնտեսական ծրագրերի իրականացմանը, ինչպիսիք են գյուղատնտեսության ապահովագրության նախագիծը, «Արմատավորի ապագան» և վերամշակող ու խնայող ձեռնարկությունների ծրագրերը:



Նախարարի խոսքով, 2021 թվականին բարձրալեռ բնակավայրերում գյուղատնտեսության զարգացման համար ծախսվել է մինչև 3 մլն լարի:

- Այսօր վարչապետի գլխավորությամբ տեղի է ունեցել Լեռնային խորհրդի նիստ, որտեղ ներկայացրել ենք 2021 թվականին բարձրալեռ բնակավայրերում գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ իրականացված ծրագրերի հաշվետվությունը: Այդ գործունեության համար հիմնադրամից հատկացվել է մոտ 3 մլն լարի և ֆինանսավորվել վերամշակող ձեռնարկությունների, գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման, ինչպես նաև նոր այգիների մշակման համար: Միաժամանակ, մենք քննարկել ենք 2022 թվականի ծրագիրը: Մոտ 5 միլիոն լարի 2022 թվականին կհատկացվի բարձրալեռ բնակավայրերում գյուղատնտեսական ծրագրերի իրականացման համար, ինչպիսիք են «Գյուղատնտեսության ապահովագրության նախագիծը», «Արմատավորի ապագան» և վերամշակող ու խնայող ձեռնարկությունների ծրագիրը,- ասաց Օթար Շամուգիան:

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԹԲԻԼԻՍԻ ՍԱԿՐԵԲՈՒԼՈՅՈՒՄ

Թբիլիսիի սակրեբուլոյում, ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդի շրջանակներում, կայացավ ճանաչողական հանդիպում մայրաքաղաքի շրջանների ղեկավարների հետ:

Աշխատանքային հանդիպմանը մասնակցեցին «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» խմբակցության փոխնախագահ Նինո Ռուխաձեն, ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդի նախագահ Ռիտա Խիզիրբեգիշվիլին, Թբիլիսիի ազգային փոքրամասնությունների համայնքների ներկայացուցիչներ և այլք: «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» խմբակցության փոխնախագահ Նինո Ռուխաձեի խոսքով, հանդիպումը զգալիորեն կօգնի ազգային փոքրա-



մասնակցությունների խորհրդի ներկայացուցիչներին և լուծել իրենց համայնքների առջև ծառայած խնդիրները: - Այս հանդիպման հիմնական նպատակն է ուղղի կապ հաստատել համայնքների ներկայացուցիչների, քաղաքապետարանի, մայրաքաղաքի շրջանային վարչությունների միջև և քննարկել այն

մարտահրավերները, որոնք հուզում են էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին,- ասաց Նինո Ռուխաձեն: Հանդիպմանը խոսեցին ապագայում համագործակցությունն ակտիվացնելու նպատակով իրականացվելիք ծրագրերի մասին: Պատրաստեց ՅՈՒՆԻՍԵՖԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ